Փաստ ինֆո
գործակալություն

www.pastinfo.am
ՀՀ, Երեւան 0002, Մաշտոցի 24, 1-ին հարկ
+ 374 11 771 778
info@pastinfo.am

«23» 12 2019թ
№ 82-Ա-19

ՀՀ Լոռու մարզպետ
պարոն Անդրեյ Ղուկասյանին՝
«Փաստինֆո» գործակալության լրագրող
Մոնա Գևորգյանից

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի՛ պարոն Ղուկասյան,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ տրամադրել տեղեկություններ հետևյալի մասին:

1. 2019թ-ի ընթացքում մարզպետարանի քանի աշխատակից է պարգեւատրում ստացել, նրանցից յուրաքանչյուրին տրված պարգեւավճարը որքան է կազմել:
2. Քանի՞ աշխատակից է պարգևատրվել 3 անգամ և ավելի: Յուրաքանչյուր դեպքում որքան է կազմել յուրաքանչյուր աշխատակցի՝ պարգեւավճարը: Քանի աշխատակցի է տրվել նյութական օգնություն եւ որքան է այն կազմել
3. Ամանորի կապակցությամբ քանի՞ աշխատակից է պարգևատրվել և նրանցից յուրաքանչյուրին որքա՞ն գումար է հատկացվել:
4. Մարզպետը, մերզպետի տեղակալները, աշխատակազմի ղեկավարը պարգեւատրվել են արդյոք Ամանորի կապակցությամբ եւ նրանցից յուրաքանչյուրի պարգեւավճարը որքան է կազմել:
4. Մարզպետարանը մտադի՞ր է կազմակերպել Ամանորյա հավաքույթ, եթե այո՝ որքա՞ն գումար է նախատեսվում ծախսվել և ո՞ր ռեստորանում են անցկացվելու միջոցառումները: Ինչպես է ընտրվել ռեստորանը, որտեղ մարզպետարանի աշխատակազմը մտադիր է կազմակերպել տոնական հավաքույթը:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում՝ բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30-օրյա ժամկետ): Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումիս պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում: Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումը: Պատրաստ եմ վճարել տեղեկատվության պատճենահանման ծախսերը:

Կանխավ շնորհակալ եմ:

Լրագրող՝ Մոնա Գևորգյան

«ՓԱՍՏԻՆՖՈ»
"ФАКТИНФО"
"FACTINFO"
01280502